

“Droschak”  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse :  
Rédaction du “Droschak”  
GENÈVE (Suisse)

## “ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԵԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### Ա Ի Ե Լ Ո Ր Գ Ի Ա Ս Մ Ը

Համիդին արիւնծարաւ բնազդները նոր դարձօնք մը ունեցան:

Կրէտէն թատր կը հանդիսանայ շէրստին անլուր վայրագութիւններու, որոնց մենաշնորհը Հայաստանին վերապահած կը կարծէր:

Ջարդը նորութիւն մը չէ Թիւրքիոյ համար. բայց բան մը որ չէր սպասուեր ան է որ մահապահանները յանդգնեցան ձեռք բարձրացնել անգլիական պահանջարկները վրայ, վերաւորեցին ու սպաննեցին 50-էն աւելի զինուոր, այրեցին անգլիական փոխ-հիւպատոսը իր տան մէջ և կրակի տւին միւս հիւպատոսարանները...

Պատահական բան մը չէր այդ ջարդը, աւելորդ է ըսել թէ կանխաւ հինաւ զաւ մըն էր ատ, որուն ծայրերը Երլտըզի դժոխքին մէջ կը կորուսին...

Գլուխ կոտորելու ալ պէտք չկայ շարժառիթը գտնելու համար. կղզիին վարչութիւնը ձեռքէ երթալու վրայ էր, ինքնավարութեան առաջին հիմնաքարը կը դրէր. ծովակալները արդէն ձեռք դրած էին Կրէտէի մաքսերուն և տասանորդներուն վրայ... Տակն ու վրայ եղաւ Երլտըզը. բան մը ընելու էր: Վայրկեանն ալ պատահ էր կարծես. Քրանսան օրհասականի ճիգեր կ'ընէր ոտքերն ապստիւլու Դրէյֆիւսեան ճահիճէն. Ռուսիան ալ կանջը չինական պարսպին դրած՝ Պէքիին մէջ անցած դարձածին կը նայէր պլշած, սրտատրոփ. Անգլիան Օմ գուրմանի պարիսպներուն առջև հասած՝ տակաւին չէր իջուցեր իր երկաթի թաթը խալիֆի գանգին...

Պատահ կարծեցին վայրկեանը ուժի փորձ մը ընելու և հին՝ արդէն մաշած հնարք մը նորէն մէջ նետեցին — Թիւրք ամբոխի մ ո լ ե ո ա ն դ ո լ թ իւ ն ը: Համիդը փաստ մը կ'ուզէր ունենալ ձեռքը՝ ապացուցանելու թէ ծովակալներն անկարող եղած էին կղզին խաղաղեցնելու: Եւ մէկ քարով երկու թուշուս բռնելու տենչով, հարածը չուղղեցին բոլոր այն կէտերը, ուր մաքսատներն անցած էին ծովակալներուն ձեռքը, այլ Կանդիա, որուն հսկողութիւնը յանձնուած էր անգլիացի նաւազներուն, զաւակները այն երկրին, որ Համիդին «գրողն» է, Հայաստանէն ետքը: Մարգարէին կարծեցեալ փոխանորդը — որ անզօր գտնուած էր անգլուե-

գիպտական բանակին յաղթական ընթացքը կասեցնելու Սուդան — իսլամութեան հանդէպ իր խալիֆայական պարտքը կատարած կ'ուզէր անշուշտ երևալ՝ Մահդիի այդ «պիղծ» հոգեառին քանի մը կաթիլ արիւնը գոնէ խմելուն:

«Կատարած իրողութիւններու» տեսութեան քանի մը աջողակ փորձերը ենթադրել տւած էին Երլտըզի մենակեացին թէ «առնող-փախչող»-ի սխտէմը քաղաքական իմաստութեան սկիզբն էր: Իսկ արևելեան և մանաւանդ հայկական խնդրին վերջին տագնապներէն իր անվնաս պրծնիլը քաղաքական մեծ ճարտարութեան մը վերագրելով, Համիդ ու իր խորհրդականները վերջ ի վերջոյ իրենք ալ հաւատացին թէ իրաւ իրենցմէ խելօք մարդ չկար աշխարհիս վրան: Այդ մոլի ինքնավար տահալութիւնն էր որ Երլտըզի համար ապահովապէս ամէնէն անքաղաքագէտ, իսկ Թիւրքիոյ տառապող ժողովուրդներուն համար ամէնէն նպաստաւոր դէպքերէն մէկը թելադրել տւաւ Համիդին:

Բարեբախտութիւն մըն էր որ անգլիացի զինուորներ ալ սպաննեցան: Եւ ծովակալ Նոյէլի կտրուկ ու խիստ ընթացքը, 5,000 անգլիացի զինուորներու խմբով Կանդիոյ մէջ, նորանոր գունդերու հետհետէ ժամանումը երկիւղ տւաւ Եւրօպային թէ մի գուցէ Անգլիան փորձէ այն կերպով խաղաղեցնել Կրէտէն, ինչպէս Ալէքսանդրիան ու Եգիպտոսը: Ջգաց Եւրօպան թէ ինչ աղետալի հետևանքներու կրնար յանգիլ իր հիւղ ու յեղձեղուկ ընթացքը ամբողջ արևելեան խնդրին մէջ. ընթացք մը որ կրնայ տանիլ միջազգային այն ծանր բարդութիւններուն, որը կանխելու համար իսկ կազմուած էր եւրօպական տիրահամբաւ ներդաշնակութիւնը: Եւ չորս մեծ պետութիւնները փութացին հոկտեմբեր 5-ին վերջնագիր մը ուղղելու Բ. Դուան, պահանջելով օսմանեան զօրագունդերը քաշել հանել Կրէտէն մէկ ամսան միջոցին: Եւ այս անգամ կատակ չէ ըսածնին:

Դանն յուսախաբութիւն մը Համիդին համար... Իրաւ որ բարի Ոգի մը կայ կարծես, որ յանկարծ կ'երևի նարկիլէին ծուխին մէջ. կը շոյէ Թիւրքին բնազդները, կը գրգռէ և... յանկարծ կը գթէ «կորստեան անդունդին» խորը, ուր հետզհետէ գնացին ջախջախելու այդ Հիւանդ Մարդուն թլխած անդամները:

\* \* \*

Վրէտէի այդ պատահարները պիտի փութացնեն անշուշտ կրէտական խնդրին լուծումը, որ ապահովաբար իր կարգին առաջ պիտի քաշէ կամ, թերևս աւելի ճիշդ լինէր ըսել, տեղ պիտի բանայ մեր դատին. որովհետև այդ երկու քոյր-խնդիրները իրենց փոխնիփոխ բայց աններդաշնակ բունկումներով փոխադարձաբար խոչընդոտ եղած են ցարդ իրարու: Առաջիկային առիթ կ'ունենանք խօսելու այդ մասին: Վ'ուզէիք մեր ընթերցողներուն ուշը հրաւիրել այս անգամ կարգ մը խորհրդածութիւններու վրայ, որոնք անողոք տրամաբանութեամբ մը կը հետեւին Վանդիոյ վերջին դէպքերու զննութենէն:

Մինչև վերջերս տակաւին՝ աղաներէ, վախկոտներէ, իմաստակներէ և գաւաճաններէ բաղկացած խումբ մը կոկորդը կը պատռէր պուալով՝ թէ հայ յեղափոխութիւնն էր եղած պատճառը հայկական խնդրին կրած ձախողանքին և հայութիւնը ծայրատող Սարսափներուն: Երբ առաջին օրերու խուճապէն ետք՝ առողջ դատողութիւնն եկաւ դէպքերն իրենց բուն արժէքին մէջ կըշռելու և պատասխանատուութիւնները ճշդելու, այդ վոհմակը իրաւ է որ ձայնը կտրեց քիչ մը, բայց նոր երգ մը սկսաւ. զ ի ն ա դ ու Լ Ը. «Հաշտւիք, կ'ըսեն, Համիդին հետ, չէք տեսներ որ ինքը նախաձեռնակ է եղեր հաշտարար քաղաքականութեան մը»:

Վանդիոյ վերջին սարսափները չեն ուշանար փարատել ու ցրելու այդ թունալից պատրանքները, — որոնցմով կ'ուզէր հայութիւնը թմբեցնել, — և թանկագին օժանդակութիւն մը կը բերեն մեր խնդրին իրական կացութիւնը պարզելու:

Համեմատենք պահ մը այդ երկու երկիրները — Հայաստանն ու Վրէտէն — ու տեսնենք թէ ո՞րն աւելի շանս ու երաշխիք ունէր նոր ջարդէ մը զերծ մնալու և բռնելու հաշտութեան համար Համիդին կարկառած ձեռքը:

Յիշելու է նախ որ Վրէտէն աւանդ կը նկատուի այսօր մեծ պետութիւններուն քով, մինչև կրէտական խնդրին վերջնական կարգաւորումը — բան մը որ պաշտօնապէս ընդունած է Համիդը տակաւին յոյն-տաճկական պատերազմին ատեն: Իրեն շատ լաւ յայտնի են նաև ծովակալներուն տրամադրութիւնը. դեռ նոր էր որ Բ. Գուռը կտրուկ մերժում ստացաւ անոնցմէ, երբ կ'ուզէր նոր զօրք խրկել Վրէտէ, կղզիին հին զօրքը արձակելու պատրուակին տակ:

Ահա՛ երկիր մը, ուր 70,000 մահադատուներ քով 270,000 կրէտացի կայ, ուր ապստամբներու բազմաթիւ ու մարզած զօրագնդեր հրացանը ձեռքերնին կըսպասեն չէզոք շրջանէն անդին, ահաանին կրճտելով օսմանցիներուն վրան: Եւ վերջապէս Վրէտէի առջև խարսխած են մեծ պետութիւններուն զբահաւորները, ամէն րօպէ պատրաստ իրենց թնդանօթներու բերնէն ջարդ ու աւեր սփռելու կղզիին վրայ. . .

Տակաւին շատ ալ չէ անցած այն օրէն, երբ Համիդ սիրալիբ ընդունելութիւն մը կ'ընէր յունական նախկին նախարարապետին՝ Ռայիին, իր ձեռքով անոր կուրծքը կը զարդարէր օսմանիւ ահանակուռ պատուանշանով մը, ու եղումեղոով շաղխած խօսքերով նաւակատիքը կ'ուզէր ընել յոյն-տաճկական նիդակակցութեան մը, հիմնած հաշտութեան ու փոխադարձ զիջումներու վրայ. . .

Որքան փափուկ էր արդարև Թիւրքիոյ կացութիւնը կրէտական խնդրին այս նոր փուլին մէջ, և որքան շրջահայեաց պէտք էր գտնուիլ Երլուզի քաղաքականութիւնը: Համիդին վեհապետական շահերն իսկ վճռաբար կը պահանջէին առժամաբար, առերեսս գոնէ նախանձախնդիր հանդիսանալ արդարութեան ու կարգուկանոնի պահպանումին. թերևս Երուսաղէմի Ռիստաւորը օգնութեան հասնէր Մէքքէի Հաճիին, ձգձգելու կղզիին գործերուն տարտամ վիճակը. . . լաւագոյն, մենք ըսենք դժոխագոյն օրերու յոյսով. . .

Տեսնե՛ք թէ ինչպէս շարժեցաւ Համիդը:

Իսկ ի՞նչ ունի մեր հայրենիքը Վրէտէի վայելած նրպաստաւոր պայմաններուն, հանդիսաւոր հաւաստիքներուն և զինեալ պահպանումին հանդէպ:

Հայկական խնդիրը չունի հիմա կրէտականին այժմեութիւնը: Հայաստանը հայերու կուռ և թուով գերակշիռ բնակչութիւն մը չունի ոչ-հայ տարրին հանդէպ, Վրէտէի պէս սահմանափակ տարածութեան մը վրայ: Հայաստանը տակաւին ապստամբ չէ բառին այն իմաստով որ կարելի է գործածել Վրէտէի նկատմամբ: Հայաստանի հողին վրայ բանակ զարկած չէ եւրօպական զբաւոյլ բանակ մը: Միւս կողմէն՝ քաջ գիտէ Համիդ որ վրէժ է բովանդակ հայութեան մեծ տենչանքն է այսօր, և իր գարշելի Լ ու ծ Ը թ օ թ ւ ւ Ե Լ Ը անոր սևեռուն գաղափարը:

Վանդիոյ սարսափներուն արիւնի ցօլքերուն տակ ահուելի մերկութեամբ կը պարզուի այսօր այն մեծ պարապը, այն ամուլ գործունէութիւնը որ Օրմանեանի պատրիարքութեան փառքը կ'ուզէին հոգակել գառներու դէմ գայլի արդարութիւնը փնտռողները:

Ի՞նչ կորանքներ յանձն չառաւ հայոց պատրիարքարանը. ո՞րը պակաս թողուց. հանդիսաւոր մազթանքներ հայ եկեղեցիին մէջ, ստո՞ր շողքօրթութիւններ, ստրկի՞ շնթանքներ. բան մը օգուտ չըրաւ: Համիդը գովեց Օրմանեանին ընթացքը ու խոստացաւ, և կը շարունակէ դարձեալ խոստանալ նորէն խոստանալ. . . Բայց երբ Օրմանեան թոյլտուութիւն կը խնդրէ հանգանակութիւն բանալ մեր հազարաւոր որբերուն համար, Համիդը երևան կուգայ իր բոլոր շնական լրբութեամբ. ճիւղային հեգնութեամբ մը մօլթի Հիւանդանոցին ապուշներուն հացն ու միսը կը հրամայէ աւելցնել տալ, իսկ Հայաստանի մատաղ սերունդը կը դատապարտէ անօթի և ցրտահար մարիլու իրենց մորթուած ծնողքներուն դիակներուն քով. . .

Պատրիարքին քանիցս հանդիսաւոր խոստում տրւած էր թէ պիտի դադրէին հալածանքները և անմեղներուն այլևս տուժել չպիտի տրուէին յեղափոխականներուն գործած յանցանքները (?): Ի՞նչ մեկնութիւն տանք ուրիշն Խլաթի դէպքերուն, որոնք — իրենց նորանոր յայտնուող պարագաներուն մէջ — 95-ի արհաւիրքից օրերը կը յիշեցնեն: Քանի մը օր առաջ ալ հեռագիրը գուժեց Վանի մօտ տեղի ունեցած արիւնահեղ ընդհարում մը քիւրդերու և հայերու միջև: աս ալ պատասխան մը չէ՞ գաղթականներու վերադարձին: Կայսերական «բարեխնամ» կառավարութիւնը պիտի փութայ հարկաւ չքմեղելու. քիւրդերն էին, ի՞նչ ընեն. բայց ո՞վ կը հաւտայ հիմա այդ առասպելներուն. Խանասորի կուէ՞ն ետք կ'ուզեն ապացուցանել մեզ թէ հզօր բանակներ շարժելու պէտք կայ այդ վախկոտ աւազակները սմբեցնելու համար:

Համիդին ուղեղը — զգայաթափ լիկած հարէմական հեշտանքներու, արիւնի գոլորշիներու և կրօնամոլութեան նօպաներու մէջ — այդ ուղեղը չպիտի սթափի երբեք ըմբռնելու իր կատարած ահարկու ոճիրները մարդկութեան դէմ և իր իսկ երկրին պատճառած մահացու վերքերը: Կանդիոյ դէպքերը նոր թէև աւելորդ դաս մը բերին. վերջին ծայր տիմարութիւն է ալ սպասել որ Համիդը ան կեղծ օրէն հաշտարար քաղաքականութեան մը յանգի, ցորչափ նեղը չզննն վինքը հայ յեղափոխական շարժումի մը առաջ բերելիք բարդութիւնները, եւրօպական ստիպեալ և իրական միջամտութեան մը հետ զուգընթացօրէն:

Հիմա երբ մեր կացութիւնը ճշդելէն ետք, պահ մը կը փորձենք աչքերնուս առջև պատկերացնել այն ամբողջը, որ կ'ըմբռնենք ապագային յեղափոխական Գործը բառին տակ, գործունէութեան Ծրագիր մը, որ այսօր բովանդակ տառապող հայութիւնը բնագրաբար կամ գիտակցօրէն կը թելադրէ մեզ, և որուն ամէն մէկ մասը պիտի իրագործուի քայլ առ քայլ, անյողդողդ կամքով մը — երբ ակնարկ մը կը նետենք այդ ծրագրին վրայ, կ'ըսենք, դադարի կամ զինադուլի մասին խորհիլն ու խօսիլը եթէ գաւառանութիւն չմկրտէինք, գոնէ մտքի տկարութեան նշան մը պէտք էր համարիլ:

Բայց մեր գործօն երիտասարդութիւնը շատօնց արդէն հրաժարած է դիւրինին տիրանալու տենչէն, իրականն ու հաստատունը ձեռք բերելու համար, որովհետև զիտակցութիւնն ունի մեր գատին իրական կացութեանը: Եւ երբ կը տեսնէ թէ ինչպէս պետութիւնները տարիներու աշխատանք կը նկատեն իրենց երկրին վերածնութեան կամ իրենց ազգային պաշտպանութիւնը կազմակերպելու գործը, գիտէ ինքն ալ որ անընդհատ, յամառու երկար աշխատանք մը կը մնայ տակաւին՝ արդէն շատօնց սկսեալ այդ Գործը գլուխ հանելու — գործ մը, որուն հիմ-

ըր նոր սերունդն իր ոսկորներէն շինեց և որուն շաղախը իր արիւնովը պատրաստեց:

Ատեն մը մեր նախորդ սերունդը կը դատապարտէինք, որ չէր կրցած լրջութեամբ ըմբռնել ու խղճմտօրէն կատարել մեր վերածնութեան գործին իրեն պատկանած բաժինը: Մենք ուրիշն, նոր սերնդի մարդիկս, սորվինք գիտակցաբար և պաղարիւնով ընդունիլ մեզ վիճակած բեռը, որքան ծանր լինի ատ: Մեր աջողութեան գրաւականը այն զրական խելքն է, այն սառն կորովը և այն անհուն անձնւիրութիւնը, որ հայ ցեղը այնքան հզօր կերպով ցոյց տուաւ գերագոյն ոգորումի այս օրերուն մէջ:

Հօրիզօնը բացուելու վրայ է արդէն. հնչուքը առած է Համիդը. Խարթումի մեծաղորդ անկումը իջեցուց իսլամ աշխարհին ամբարտաւանութեան փութերը, իսկ Կրէտէի փրկութիւնը մօտալուտ է...

Պատրաստ կենանք մեր պատնէշներուն վրայ, որ դէպքերը յանկարծակիի չբերեն մեզ:

Թող պոռան որքան կ'ուզեն «զինադուլ... հաշտութիւն...» անոնք, որ դեռ պայքար չմտած՝ յոգնած են արդէն. հայ ժողովրդին այլասեռած տարրերն են անոնք, դատապարտուած անհետ կորսուելու:

Իսկ մենք առաջ, անակնկալէն աւելի մեր խելքին ու բազուկներուն վստահինք, և չմոռնանք աջողութեան էական պայման մը — զիսիպլինը մեզմէ ամէն մէկին և ապա գործին մէջ:

Ապագան մերն է այն ատեն, և այն ատեն մենք գիտենք մեր ըսելիքը Երլաղին:

Ն Ա Մ Ա Կ

Ռ Ո Ւ Ս Տ Ա Ճ Կ Ա Կ Ա Ն Ս Ա Շ Մ Ա Ն Ա Գ Լ Խ Է Ն

ԽԼԱԹԻ ՄԱՐՄԱՓՆԵՐԸ

3/15 սեպտեմբեր 98.

Մինչ մէկ կողմէն խուճը-խուճը կը վերադառնան երկիր նախկին կոտորածներէն փախչողները, միւս կողմէն նոր փախստականներ հալածանքներէ կը ձգեն Ռուսիա կ'ապաստանին: Անդուլ երթուղարձ մը: Մայիս և յունիս ամիսներուն մէջ 100-200 հոգի գացած են Ռուսաստան և դեռ շարունակ կուգան մանաւանդ Խլաթի և Բաղէշի գաւառներէն: Ասոնց պատմութիւնը — որը ըստօրե կը հաղորդենք համառօտիւ — սարսուռ և արհաւիրք կ'ազդէ մարդուն վրայ:

Չմոռնանք ըսել թէ թիւրք կառավարութիւնը ամէն միջոց ձեռք առած է սահմանը փախստականներուն առջև գոցելու համար: Համիդականներ և զօրքեր խիստ կերպով կը հսկեն սահմանագլխին վրայ և մարդ չեն թողուր որ անցնի: Պատահածը կը չարչարեն կամ կը կոտորեն. ինչպէս մայիսի վերջերը սպաննած են բուլաւնըխի 4 կին և 8 այր: Աւելորդ է ըսել թէ թիւրք կառավարութիւնը միշտ բերանը կը սրբէ, և միշտ պա-

տրւակներ կը ստեղծէ ինքզինքն արդար հանելու համար — այդ պետութիւնը չարութիւններ ստեղծելու, քան-դելու հանձարը ունի գոնէ, եթէ ոչ շինելու:

Այդ կարգի պատրւակներէն մէկն եղաւ մօտերս Ադրբեյրը և իր խումբը փնտռելու ու ձերբակալելու փորձը: Չմեռնէ արդէն կառավարութիւնը և քիւրդերը խլաթի ժողովուրդը կը նեղէին և կը պահանջէին որ Ադրբեյրը իրենց յանձնւի. բայց և այնպէս շատ չէին առաջ քալեր, ոչ ալ կը կոտորէին կամ կը թալանէին: Գարնան սկզբէն իվեր սկսեր են սաստիկ հարստահարել: Վերջապէս մայիսին կանոնաւոր զօրքի հարիւրապետ Ալի պէյը (Խօշկայ չէրքէզ Սուլթան պէյի եղբայրը) հետն առնելով 50 տաճիկ զօրք Բաղէշէն ճամբայ կ'իջնայ Բաղէշի և խլաթի լեռներուն, ձորերուն ու գիւղօրէններուն մէջ Ադրբեյրը փնտռելու ու բռնելու համար: Ճանապարհին յիշեալ հարիւրապետը կը հաւաքէ 100-150 համրականներ ևս, որոնք են Վիցնոյ Մուսայ պէյը 50 հոգով, Չիւրոյ Միրզա պէյի տղերքը 50 հոգով, Բզօնցի Ռամսէնը 20-30 ձիաւորով և Ծախք Չորցի Չարքազ աղան 20-30 ձիաւորով:

Ամբողջ խումբը գիւղէ գիւղ ժուռ կուգար և որ գիւղ որ մտնէր քանի մը օր կը մնար: Ալի պէյը իր հանգստութեան ճամբան լաւ գտած էր. Դատան, Ջրհոր, Համիրամ, Ուրտափ, Հախրէ, Ծւատ, Պօռ, Կամախ, Փափշէն, Մզրէ և այլն գիւղերը այց տալէն ետքը կ'անցնի խլաթու գաւառի գիւղերը՝ Ծորկոք, Կծւաք, Ծղաք, Հաղաղ, Կամուրջ, Կոշտիան, Սոխորդ (Ադրբեյրի գիւղը), Վանք, Փրիսուս, Մեծք, Տապաւանք, Ռէզաթ և բոլոր մնացած սարի 10-20 գիւղերը:

Այդ պաշտօնական աւազակախումբը խուզարկութեան պատրւակի տակ ոչ մէկ լրբութիւն խնայած է. տանջանք, թալան և բռնաբարութիւն: Խեղճ գիւղացիներէն կը պահանջէին որ ցոյց տան Ադրբեյրի տեղը, հակառակ պարագային ամէն չարագործութիւն պիտի ընէին: Որ գիւղ որ մտնէին թէ գիշերով, թէ ցերեկով, հրացանաձգութիւններով կը մտնէին, (տաճիկ զինուորները միշտ քաջ են երբ գիւղի մէջ են, լեռներու մէջ է որ գլխու պտոյտ կ'ունենան): Գիւղը մտածնուն մեծերը, ուսները մէ՛ ճ լ ի ս ի կը հրաւիրէին. իսկ քիւրդերուն ու զօրքերուն տէստուր էր թալանել և ուզած բարբարօսութիւննին ընել:

Քիւրդերը իրենց հետ բերած էին կարգ մը անգէն քիւրդեր ալ որոնք համրականներու թալանները իրենց գիւղերը փոխադրելու պաշտօնը ունէին: Նորին Մարգասպան Վեհափառութեան զօրքերը, տաճիկ և քիւրդ, նախօրօք կ'իմացնէին թալանակիր քիւրդերուն որ գիւղը երթալին, որպէս զի աւարը տեղ հասցնելէն ետք իսկոյն հասնէին յաջորդ գիւղին կողպուտը կրելու համար:

Երբ այդ երկուսնէ գազանները գիւղ մը հասնէին, առաջին գործերնին կը լինէր կանչել գիւղին մեծերը և պահանջել որ Ադրբեյրը ողջօղջ բռնեն և իրենց ձեռքը յանձնեն կամ տեղը ցցեն: Բայց ապահով եղիք որ եթէ տեղն ալ իմաց տրւի, քանի մը քիւրդութիւն հեռուէն պիտի անցնին, որովհետեւ եթէ Ադրբեյրի շոշորթը տեսնեն շան պէս կը զողան:

Ադրբեյրը մարդու չ'ըսեր ուր գտնւիլը. այնպէս որ անօգուտ է զան հետապնդել: Բայց Ալի պէյի քաջարի խումբը՝ որ իհարկէ ուրիշ նպատակ ունի սարսափահար և դժբախտ ժողովրդի մը մէջ թրքական

փէշրաֆնէր ընելով, սուրերնին շխրցնելով, հայերուն բերնի չօր հացը հարամ ընելու համար, անհնարին տանջանքներու ու հալածանքներու կ'ենթարկէին զանոնք: Անոնք որոնք Ադրբեյրի տեղը չգիտնալու դժբախտութիւնը ունէին վայ եկեր էր վրանուն. կը ծեծէին, կը փետէին ու գլխունուն վրայ կարմրցուցած թաս կը դնէին. ոտերնին ալ փայտէ մէն կէն էն եր ու մէջ կը ձգմէին. ատոնցմէ շատերը մեռած են: Ահուաներ կոտորտելը, գլուխ ջարդելը և ուրիշ անլուր չարչարանքներ հաշիւ չունին. կիները լլկելէ ետք նոյն տանջանքներուն կ'ենթարկէին. իսկ իբր չարչարանքի նորագիւտ նրբութիւն հայ կիներու վարտիքներուն մէջ կատուներ կը ձգէին, ետքը ամէն կողմէն կապած, կը կատողցնէին կատուն որ ճարահատ կը ճանկուտեր և կը պատուտեր դժբախտ կիներու մարմինն ու աղբները: Կասկածելի մարդիկները կախաղան կը հանէին. բայց հէնց որ խեղդուելու մօտ էին, փաթ, վար կը ձգէին, երբ ուշքի կուգար կըսկսէին կրկին ու կրկին հարցաքննել. և այսպէս մահը ու տանջանքը անիւի պէս կը դառնային: Գեղեցիկ կիները ու աղջիկները հետերնին կը տանէին, և քանի մը օր իրենց գազանութիւններուն յագեցում տալէ ետք, բաց կը ձգէին: Շատ մը կիներ մեռած են վախէ և տանջանքէ: Իսկ գիւղերու բոլոր ապրանքները գողցւած:

Տանջանքներէ ստիպւած հինգ հայ համաձայնած էին ցոյց տալ Ադրբեյրին բարեկամները և անոնք որոնք երբ ևիցէ Ադրբեյրին օգներ ու կերակրեր են: Այդ մատնւածներէն անոնք որոնք չէին կրցած փախչիլ չարաչար սպանւած են: Ամէն գիւղ իր սպաննւածներու թիւը ունի: Չեւք անցած քահանաներուն մօրուքները քերթելէ ետք մէկ քանին ալ սպաննած են:

Երբ այդ դժոխային խումբը հայ գիւղերուն մօտեցած էր ընկիւնները մեծ ու պղտիկ, լեղապատառ ամէն բան թողած Բուլանըլի, Մշոյ դաշտի կողմերը փախած կամ նըկուղներու մէջ պահուած են. ոմանք ալ բարեկամ քիւրդերու մօտ ապաստանած են: Այդ թշուառներէն մէկ քանին հազարումէկ գժւարութիւններով շունչներնին մինչև Ռուսաստանի սահմանը առած են. իսկ չկրցող փախչողները կրած են այն դառն ու դժնդակ ճակատագիրը որ թիւրքերու աշխարհին յատուկ է: Երկու գաւառ այդ կերպով ամայացած են, բացի երեխաներէն ու ծերերէն: Վայրենի Ալի պէյի մարդիկը լեռներէն երբ դաշտերուն մէջ մարդիկ տեսնէին քէյֆի համար հեռուէն նշան կ'առնէին ու կը զարնէին:

Ադրբեյրին գիւղը Սոխորդ մանաւանդ բոլորովին աւերած են: Այդ գիւղին մէջ մարդ չէ մնացած, ամէնքն ալ ցիրուցան եղած են. ունեցածնին ալ կողպուտած: Ադրբեյրի և իր բարեկամներու տուները այրած են:

Այս ամէն չարագործութիւններէն և ոճիրներէն ետք ամէն գիւղէ 5-10 հոգի բռնած, մարդ և կին, ու Բաղէշու բանտը խրկած են. այնպէս որ բանտարկեալներու թիւը քանի մը հարիւրի կը հասնի. . .

Ահա Բաղէշի հայ գիւղերուն մէջ իրերու ներկայ վիճակը. խեղճ ժողովուրդին ոչ կերածը վար կ'երթայ, ոչ խմածը. գիշերը քուն չունի, ցերեկը սարսափով սմբած:

Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Է Ն

Հոգի-հարուստ ՄԷ ՊԱՐՍՅԱԹԻՒՐԻ Կ ԱՆՄԱՆԱԳԼԵՐԻՆ ՄՕՏ

23/5 Հոկտ. 98

Կը յիշէք որ Խլաթի սարսափներուն գոյութիւնը պատրիարքարանը յիշեցուցած էր Երլտըզին, որ արմացեր-զարմացեր էր լսելով այդպիսի անօրինութիւններու գործելը փատիշահին արդարագատ շուքին տակ: Այս անգամ փոխեցաւ դերը: Հարաթ մը առաջ էր երբ պատրիարքը ստիպողական կերպով կանչեցաւ Երլտըզ: Իրարանցում մը ինկեր էր հոն. հեռագիրը լուր բերած էր թէ թիւրք-պարսկական սահմանազրկին մօտ, Բայազէտի գաւառակին Թուրքակ գիւղին քով արիւնահեղ ընդհարում մը տեղի ունեցեր էր զինուած հայերու և քիւրդերու միջև: Պալատին առաջին քարտուղարը արգար (!) զայրոյթով բացատրութիւն կը պահանջէր պատրիարքէն «այսերախտ» հայերուն այդ նոր գլխացաւանքին առթիւ: Իր պատմելուն նայելով՝ քառասունի մօտ զինուած հայեր, ամէնքն ալ հեծեալ ասպատակեր ու աւերեր են Թուրքակը և ուրիշ գիւղեր և բաւական թուով ալ քիւրդ ջարդեր են: Քարտուղարը չէր մոռցած աւելցնել թէ շնորհիւ սուլթանին շարագործներու խումբը ցրած է արդէն և քանի մը հոգի ալ գերի բռնուած:

Ի՞նչ կրնար պատասխանել պատրիարքը դէպքի մը մասին, որ իսպառ անծանօթ էր իրեն: Բայց Երլտըզը քառորդ դար մըն է որ արդէն դասեր կուտայ. պատրիարքին կը մնար բանալ «աւուր պատշաճին» տուրակը. այդպէս ալ ըրեր է: Հայ խռովարարներ չեն ատնք, կ'ըսէ Օրմանեան, այլ հաւանօրէն պարսկահպատակ քիւրդեր են, որոնք ամէն տարի կ'ասպատակեն սահմանակից գաւառները:

Երլտըզի պղտոր աղբիւրէն եկած այդ պատմածքին մէջ միակ ս տ ո յ գ կէտը առայժմ ան է, որ ընդհարում մը, և բաւական ծանր, տեղի ունեցեր է հայերուն և քիւրդերուն միջև:

Բայց այդ կռիւը մեր կարծիքով ինքն ա պ ա շ տ պ ա ն ու թ ե ա ն դէպք մը պէտք է նկատել:

Թուրքակ գիւղը սահմանազրկէն երեք օր հեռու կը գտնուի, ուստի հաւանական չէ որ քառասուն հոգիէ բաղկացած խումբ մը, շարժումներու յենակէտէ մը այդքան հեռու վայրի մը մէջ — ուր այնքան զօրաւոր է թշնամին — նախայարձակ լինելու անխոհմտութիւնն ունենար: Չենք ուզեր ծանրանալ նաև այն կէտին վերան ալ թէ այդպիսի ուժերով ասպատակութեան մեկուսի դէպքեր ողբան կը համապատասխանեն յեղափոխական կազմակերպութեան արդի ծրագրին: Ընդունելով թէ ս տ ի պ ե ա լ ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ու թ ե ա ն դէպք մըն է ատ, հաստատապէս կարելի է ենթադրել թէ դիմադրող հայերը եղած են կամ վերադարձող գաղթականները և կամ գաղտնի ձաւորող յեղափոխական խումբ մը:

Պէտք է կարծել որ ընդդիմադրութիւնը բաւական զօրեղ եղած լինելու է, որ այդքան յուզում պատճառեր է Երլտըզին մէջ: Հուսով կ'իմանանք:

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Է Ն

22/3 օգոստոս 98

Նախորդ նամակով հաղորդած էինք արդէն թէ եղբայրագաւ իժեր սկսած են նորէն ծայր տալ քաղաքիս մէջ: Դաւաճաններու խումբ մը կազմուած է — որոնցմէ մէկ քանին յեղափոխական դիմակի ներքե թաքնուել կը փորձեն — նախագահութեամբ միականի ՉԱՐՈՒՆ-ՉԵԱՆ ԱՔԻԱՀԱՄԻ, որ արդէն մէկ-երկու տարի առաջ վարձատրուած էր Մարդասպանին շքանշանովը: Այդ դաւաճան խումբին նպատակն է յեղափոխական շարժումը կանգնեցնել վասպուրականի մէջ բնաջինջ ընելով յեղափոխական կուսակցութիւնը: Հիմա այդ դաւաճանները ջանադիր են գտնել ու ձերբակալել տալ յեղափոխական գործիչները կամ կոմիտէներու անդամները այն միամիտ վստահութեամբ թէ անկէ ետքը գործերնին կը դիւրանայ. . .

Այդ մատնիչներու խումբը քանի մը տասնեակներէ կը բաղկանայ և ամէնքն ալ թոշակ կը ստանան կառավարութենէն. արդէն ոստիկան-զինուոր գրուած են, և շուտով պիտի ստանան պաշտօնական զգեստնին:

Դաւաճան խումբը իր տրամադրութեան տակ ունի կանոնաւոր զօրքի դասակ մը, իր ուզածը ձերբակալել տալու կամ մատնանիշ ըրած տեղը խուզարկել տալու համար: Միայն այս ամիս տասնէն աւելի անձեր բանտարկել տւին:

Բաղէշի և Խլաթի մօտերը կատարուած ահուկ խրժոժութիւններու մասին գրած ենք արդէն համառօտիւ: Ահաբեկ ժողովուրդը սկսած է ասդին անդին փախչել տարագիր: Քանի մը եւրօպական հիւպատոսներ — որոնց մէջ նաև քաղաքիս անգլիականն ու ռուսականը — մեկնած են արդէն քննութիւններ կատարելու տեղն ու տեղը: Կը վախցւի կոտորածէ: Մեծ երկիւղի մէջ են նաև քաղաքիս բնակիչները, որովհետև փորձառութեամբ գիտեն թէ Բաղէշ տեղի ունեցող դէպքերու հետևանքը անվերջապ հոս կ'անդրադառնայ, ինչպէս այստեղինն ալ հոն փոխադարձաբար:

Բաղէշի զինուորական հրամանատարը պաշտօնանկ եղած և Պոլիս դատի կանչուած է:

\* \* \*

12/24 օգոստոս 98

Քաղաքիս տագնապալի կացութիւնը մեղմացած է քիչ մը. բայց դաւաճանները, այդ գառի զգեստով գայլերը, կը շարունակեն իրենց սխրագործութիւնները: Բարեբախտաբար կուսակալը խաղաղասէր մէկը կը թւի առայժմ, և թերևս այդ պատճառով մատնիչները երեսէ ինկած են: Ժողովուրդը կը յուսայ որ պաշտօնական մարմինները պիտի յաջողին չէզոքացնել այդ վատագիւնները և մտքերը խաղաղեցնել: Տեսնենք:

Մուշէն օգոստոս 7 թւակիր նամակէ մը կը տեղեկանանք թէ Տարօնի ժողովուրդը վերջին աստիճան նեղ դրութեան մէջ կը գտնուի. ապրելու միջոցներ կը պակասին. նպաստի բաշխումը դադարած է արդէն. հ ա ց չ ի կ ա յ . . .

Մ Ե Ր Ն Շ Ա Ն Ա Բ Ա Ն Ը

(ՆԱՄԱԿ ԿԻՊՐՕՍԻՑ)

— 0 —

Եթէ կայ մի վե՛հ զգացում, որը իբրև Տիմնական սկզբունք իր նշանաբանն է գնում մի ընկերակցութիւնն ո՛ր և է սուրբ գործի համար, — դա անպայման ազնւո՛ւթիւնն է: Ի՛նչ խօսք, որ յեղափոխութիւնը բոլոր սուրբ կոչած գործերից ամէնասուրբն է, ամէնաներականը, նա գաղափարական ձգտումների կատարելութիւնն է. նա ճնշած ազգերի, հաշածաճների ազատութիւն ձեռք բերելու համար ընտրած բոլոր միջոցների մէջ «սրբութիւն սրբոցն» է: Հետևաբար որպիսի ջինջ ազնւութիւն պէտք է փնտռել այն անձնաւորութիւնների մէջ, որոնք խմբւած են յեղափոխական գործի շուրջը:

Ո՞վ կարող է ուրանալ թէ ո՛ր և է ընկերակցութիւն, լինի նա բաղկացած 5 թէ 5,000 անդամներից, երբ իրեն հիմք ունի բարոյական այդ մեծ ուժը, իր գոյութեան տեսակէտից ապահովւած է առմիշտ, քանի դեռ նպատակը մնում է նպատակ, ձգտումը՝ ձգտում քանի դեռ հասարակական պայմանները ժողովուրդի այս կամ այն մասի գոյութեան, բարեկեցութեան, ապագայի համար անհրաժեշտ են դարձնում այդպիսի մի ընկերակցութիւն, այդպիսի մի կազմակերպութիւն:

Միևնոյն ժամանակ ո՞վ չգիտէ, որ շատ դիւրին է ընկերակցութիւններ կազմել, ծրագրեր — նոյն իսկ յաջող ծրագրեր — պատրաստել, բայց այդ ընկերակցութիւնները յարատև անելու, ծրագրերի պահանջները գործադրելու համար անհրաժեշտ շիտակութիւնը երբ պակասի, կամ երբ գործի մէջ ազնւութեան տեսակէտից կոմպրոմիսներ (չեղումներ) մուտք գործեն, նրանք, այդ ընկերակցութիւնները, դատապարտւած են կամ քայքայւելու, և կամ եթէ շարունակեն էլ իրենց գոյութիւնը, այդ կը լինի մի գրութիւն, որը մենք սովոր ենք անւանել ինքնախաբէութիւն: Դա մի անբուժելի ցաւ է, որ կամաց կամաց առաջնորդում է որ և է կազմակերպութիւն դէպի կործանում: Այն օրից, երբ որ և է կազմակերպութեան մէջ քսութեան, չարախօսութեան, նախանձի նշաններ են յայտնուում, երբ նիւթականի ու բարոյականի նկատմամբ զեղծումներ են յայտնագործուում, ուրիշ խօսքով, այն օրից, երբ այդ կազմակերպութեան մէջ զգալի կերպով նկատուում է անպնդութիւնը իր բոլոր զարեքի կողմերով, այլևս անվստահութիւնը բուն է գնում նրա անդամների մէջ, ամէն մէկը միւսի մէջ իր պակասութիւնն է փնտռում, ամէն մէկը իր փառքը ուրիշի անկման մէջն է որոնում, տեղի անտեղի կասկածներ են ծագում, կազմակերպութիւնը սկսում է տատանւել և վերջապէս քայքայւել: Այդ հիւանդութեան հետևանքները բացարձակ նկատելի են ամէն մէկին, որ քիչ շատ մտածում է մեր յեղափոխական գործի աջողութեան և ապագայի մասին:

Այս այսպէս լինելուց յետոյ, միթէ կարելի է մոռանալ թէ ի՛նչ հրաշք է կատարում ազնւութիւնը, որը փնտռել ամէն մի յեղափոխական անուն կրող անձի մէջ ո՛չ միայն իւրաքանչիւր կազմակերպութեան բարոյական պարզն է, այլև գործնականի տեսակէտից միակ անհրաժեշտ պայմանը:

Որ և է կազմակերպութեան կողմից իւրաքանչիւր գործի մէջ քաջութիւն, յանդգնութիւն, խելք փնտռելուց առաջ՝ ազնւութիւն փնտռելը միակ նշանաբանը պէտք է լինի: Անհատների մասնաւոր կեանքում ցոյց տւած շիտակութիւնը, նրանց գաղափարականի մէջ ունեցած ազնիւ յատկութիւններն են, որոնք յեղափոխական գործի մի-մի հաստատուն օղակները ներկայանալով՝ ոչ միայն նրա հիմքը պարփակող ամուր շղթան են կազմում, այլ և որ գլխաւորն է, նրանք հաւաքաբար առած, մի բարոյական այնպիսի կուսն են հաստատում, որի վրայ գործել ուժ վատնել, զրկանքներ կրել և մինչև իսկ կեանքի զոհողութիւն յանձն առնելը համակրանքով է ընդունում ամէն մի անհատ, որ գնահատել գիտէ ազնւութեան ուժը:

Հասարակութիւնը, որ լաւը, շիտակը ճանաչելու գործում հաւաքաբար երբեք չի սխալւիլ, յեղափոխական գործի մէջ ևս գիտէ ընտրութիւն անել: Նրա խանդավառութիւնը դէպի ազնիւ գործը անսահման է, ինչպէս և անսահման է այն զայրոյթը, որ արդարացի կերպով արտայայտում է նա դէպի ամէն մի անարժան քայլ:

Մենք գնահատում ենք ամբոխի, հասարակութեան այդ մաքուր բնազդը, որ աւելի նկատելի է գործիչ անհատների ընտրութեան խնդրում: Այդ կէտում արդէն նրա վերաբերմունքը այնչափ մխիթարական է, որ մենք աւելին չէինք էլ կարող սպասել: Այդ բնազդը նրան թելագրում է, որ անհատներ ի արժանիքն է արժանաւոր համախմբում կազմողը. իսկ այդպիսի համախմբումը մի պատկառելի պատկեր է, որի հետ միանում են հասարակութեան ամէնալսեմ ձգտումները, նրա իրէպնները, և որի հանդէպ ստոր նկատումները, ոտնձգութիւնները փոշիանում են: Դա մի բեմ է, ուր լոյսի և յոյսի թագաւորութիւնն է տիրապետում:

Իսկայ, ամէնախիստ վերաբերմունք ընդունած լինելով գործիչների ընտրութեան գործում, լաւ հասկանալով, որ միմիայն այդ եղանակով կազմակերպութիւնը թէպէտև դանդաղ, բայց միևնոյն ժամանակ անընդհատ աճման ու բարգաւաճման շաւղի մէջ է լինելու, և ազնւութիւնը նկատելով իբրև առաջին պայման, — ամէն մի յեղափոխական գործիչից այդ արժանիքը անպայման պահանջելով է, որ մենք կարող պիտի լինինք երկարակեաց լինել, տանել մեր խաչը, մինչև որ մեր ձգտումները մարմին առնեն, իրականանան:

Մեր գործը «սրբութիւն սրբոցն» է. նրա պաշտօնականները ազնիւների ազնւագոյնը պիտի լինին. ահա մեր նշանաբանը:

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ծ Ո Ի Ր Զ Ը

Ամէն քան լաւ է, կ'ըսեն, երբ վերջը բարի է: Առաջնորդ կան գործ երբեք չի կարելի ընդհանրացնել ջարդի, բարքանդ ընել «վերջը բարի է» ըսելով, մարդկային ամէնէն խոշոր էշութիւններէն է: «Արիւն թափեցէք որ ազատւիք»-ը դիւանագիտութեան առասպելական վարդապետութիւններէն մէկն է, որով թէ սուրին իբաւունքը արդար կը հասնէ և թէ ազատութեան ծամբայ մը կը ցցնէ մարդկութեան՝ փշերկաթներով ու տատանւներով ծածկւած. Աւտարմանի պատէրին համեմատ, թէ նեղ ու փշոտ ծամբան արքայութեան համեմատ սպանով ծամբան է: Սպաննել, առութաւ ընել ամբողջ ժողո-

վորդներ ու ընտանիքներ ու ետքը անոնց տղաքները որդեգրել կամ ողջ մնացողներուն քանի մը ստակ տալ եւ ստիպել որ զինքը հարածող ծնորդ լռէ շան մը պէս, դարուս լամբէն անբարոյական երեսն է:

Կրէտէի սարսափները մոմտալ չե՞ն տար մարդկային տիրող դասին ունայնատուութեան վրայ. երբ պէտք է որ ժողովուրդ մը իր հացին իր ջրին հանգիստ ապրի, ինչու սպասել որ տգէտ բնակալուծեան սուրբ այդ ժողովրդին սիրտը մեւի, թշուառացնէ զան:

Դար մընէ որ Կրէտէն կը ծծկուի, ու այդ կողմին դարու մը սերունդը աջիւնի մէջ ծնած ու արիւնով ծծւած է: Աշխարհք գիտէր որ այդ ժողովուրդը դժբախտ է, կը տեսնէին, կը լսէին անոնց քաշածները: Միւս կողմէն եւրոպական ազգերը իրենց իրենց մէջ արդարութեան, մարդասիրութեան ու քաղաքակրթութեան անունով երկինք գետին կը գողացնէին. ու դեռ այսօր քսաներորդ դարու արեւազալին ամբողջ քաղաքակրթ աշխարհի պողոտաները տառապող մարդկութեան դրական ծառայութիւն մը չէ յաջողած ընել: Եւ մարդկային կեանքը ծովը ինկած մարդուն պէս օձին կը պլլուի: Երբ կ'ըսենք «ամէն քան լաւ է երբ վերջը բարի է», աւուր պատշաճի վերջին մըն է. նկատելով իրերու ու ազգերու ներկայ վիճակը որոնցմէ չենք կարող սպասել մարդասիրական զգացումներու անմիջական եւ տառական գործադրութիւնը, կորցնելով թէ դեռ ժամանակ կայ ուր մարդոց բարիք ընելու համար նախ անոնց շարիք ընելով փորձելու պէտքը չպիտի զգանք, եւ մարդկային իրաւունքը ծանշալու համար անոր սունտեղը էրեւոյ, երկիրը փուճ ընելու «մունտա» զգացումը չպիտի ունենանք: Ուրեմն Կրէտէի համար կրնայ պատշաճի վերի առածը, պայմանադրութիւն միայն եւ ոչ սկզբունքով: Առայժմ ստ ալ բան մըն է:

\* \* \*

Տարիէն աւելի է որ եւրոպական մարտանաւերը Կրէտէի եզերքը ծոյծոյլ կը խուկան. կողմին կրկու ազգաբնակչութիւններ ամէն օր իրար կը բզկտէին, պաշտօնագրերը ուզածին կ'ընէին եւ սովը կըստանալու աւել զան: Ժողովակները բացբերան հեռուէն կը դիտէին միայն, օր մըն ալ իրենց թողա-նութիւնը բացին խնձր ապստամբները ուժակոծելու համար. այնպէս որ թիւրք չանշան թերթերը թեւ առած սկսան խաւիֆայի գերմարդկային կարողութիւնը փառաբանել, յայտարարելով թէ եւրոպական մեծ պետութիւնները հիանալով վն: սուլթանին քարծր քաղաքակրթութեան եւ անոր... քաղաքակրթութիւնը դերին վրայ, մանաւանդ անոր սիրտը շահելու համար, հպարտութիւն քննարկելով, անոր դէմ ապստամբողները շարաշար կը պատժէին եւ այլն: Ու այդպէս ժամերը, ամիսները օրօրուն ու մունջլաց կ'անցնէին անբախտ կողմին վրայէն: Որքան տան թիւրքերը եւրոպացիներուն թեւին չէին դակեր ուզածին կ'ընէին. թեւ այնքան քանիք գրեցան, քանակցութիւններ եղան, սուլթանը ականջացուք քրաւ ասոնք ամէնն ալ ըստ այն առածին թէ Սատկած է շք գայլէն չի վախնար: Եւրոպական միաձայնութիւնը Կրէտէի խնամտութիւն մէջ սկսաւ արդէն խաղաղի եւ իրարմէ քէն ընել, հարսնիքի տունը սուգի տուն ընելով:

Սուլթանը Կրէտէն գտնութեան խնձորի մը պէս նետած էր Եւրոպայի տարփածուններուն առջև եւ կը յուսար թէ արեւելեան հարցով շահագրգռող տէրութիւնները, Կրէտէով զբաղեցնելով Ջրւանը իրեն առջև պիտի բանար յաւիտենական ժամանակ մը, եւ թեւերը ազատ պիտի շարժէր: Սակայն քրաւ քրաւ, գրուել կերաւ դագի չամիդը:

«Պիտի ըլլալ» կ'ըսէ Գատէրը եւ եղաւ: Սեպտ. 3-ին երբ անգլիացի պաշտօնեաներ, անգլիական զինուորներու հսկողութեան տակ, Կանդիոյ մէջ տասանորդները կը ժողվէին, թիւրք խուժանք, պաշտօնագրերուն հետ խօսքմէկ քրած կը յաջճակին աի մը անգլիացի զօրքին վրայ եւ անոնցմէ 50-ի չափ կըսպաննեն, կը վիրաւորեն. մնացածը հազիւհազ իրենց նաւերը կ'առնեն շուշեքիմ: Ետքը խուժանք կը կոտորէ քրիստոնեաները եւ անոնց թաղերը կը թաշնէ ու կրակի կուտայ, — ատոնց փլատակներուն տակ հարիւրաւորներ զո՞հ եղած են, — չմոռնալով նաեւ անգլիական փոխ-հիւպատոսն ալ շարաշար սպաննել: Ջոհերուն թիւը 800-ի կը հասնի: Արիւնարքու ամբողջ, թիւրք իշխանութեան մեղակցութեամբ, չայստասնի կոտորածներուն քարքարոսութիւնը գործադրելով նոյն իսկ եւրոպական զօրքերու վրայ, կ'ուզէր ցցնել թէ ինք եւրոպացիներէն ալ փէր վա չունէր եւ թէ չէին հանդուրժեր որ կեանքները խաւիֆային հողին վրայ ծննդութիւններ ընէին: Թիւրքերուն հոգեբանութիւնը բոլորովին տարբեր կաւով շինւած է, աւելի աւագուն: Նոյնիսկ Պարիզի մէջ երկու թիւրք, երբ իրար գան, անպատճառ

սուտ իրաւ մէյ մը իրարու պիտի ըսնն, ազգային բնորոշ գիծերէն մէկն է. «Պու կեանքուրարը քէսմէլի, փարաւարընք քարըւարընք ալը վէրմէլի»: Կեանքուր Զարդելու սուկալի բնական հակում մը ունին: Օր մը, տաճիկ էֆէ մը երկան սուր մը կը սրէ, թիւրք պաշտօնեայ մը կը հարցնէ անոր. «Անմէն, ատով քանի կեանքուր կըսպաննես». — «Մալախա պիտիտէն աշաղա իտարէ էթմէզ» կը պատասխանէ:

Սմբած ծովակալները թիւրքերու իշխատակէն հօք վեր ցատկեցին. անգլիական ծովակալը անմիջապէս ուժեղանք Կանդիան ու աներակ քրաւ: Թիւրք իշխանութիւնները լեղապատառ իրար անցան եւ աշխատեցան կարգը վերահաստատել: Ժողովակալը հրամայեց որ յանցաւորները ձերբակալին ու իրեն յանձնուին. շուտ շուտ կարգ մը անմեղ մարդիկ ձերբակալեցան ու յանձնեցան. առանց բուն հեղինակները զանել շանալու:

Անգլիացիք շտապով նոր զօրք ապսպրեցին որոնց թիւը 5,000-ը կ'անցնի հիմա: Խնդիրը շատ ծանր կերպարանք առնելով, եւ չուզելով անգլիական կառավարութեան պատրուակ մը տալ կողմին վրայ իրաւունքներ քանցնելու, ծովակալները պահանջեցին թիւրք խուժանին զինաթափութիւնը որ մասամբ գործադրեցաւ. իսկ չորս մեծ տէրութիւնները առանց անմալու վերջնազիւր մը իրկեցին սուլթանին որուն մէջ դիւանագիտական կտրուկ ու չոր ազդարարութիւնով մը կը պահանջէր որ թիւրք զօրքերը իսկոյն հեռացնին. հակառակ պարագային բուն միջոցներու պիտի դիմուի: Երջրագը դիւանագիտական մտաւան որոշման վրայ զըսկուտաց, փախստի ծամբայ դեռ չէ գտած. այժ կամ չէ ըսելու իրաւունք միանակ տրւած է իրեն: Կրգայ թէ ծանր պատասխանատուութիւն մը ունի. թէ եւ կը շանայ յանցանքը նետել եւրոպական դատարաններուն վրայ, որոնք արգիւտելով օսմանեան նոր գիւտներու մուտքը կողմին մէջ անկարգութիւնները աճելու պատճառ եղան:

Զագի չամիդ, որոշ քաղաքական ուղղութիւն մը ունի, ուրկէ մնալ չի շնոր. երկրին օգտին համար չէ հնարկէ, այլ միայն զբոսանքի համար: Նախ կ'ընցողցած է թէ իր ժողովուրդը լիք է եւ... վայրենի, որուն կատաղութեան թուրք չի դիմանար. երբ կըզգայ թէ օտարէն նախատիք մը կամ ըսպանալիք մը պիտի գայ իրեն, նախապէս կը յայտարարէ. «Մի ընէք, ժողովուրդը կը վիրաւորի, հետեւանքին պատասխանատու չեմ»: Անա այս սղոտու եւ հարէմական քաղաքակրթութեամբ քալած է տարիներէ իվեր. եւրոպացիներէն կեքած նախատիքներ վրէժը քրիստոնեայ դժբախտ աշխարհուրն զլիւն թափելով: Զգնք անցեալը. դեռ նոր կըր Կրէտէ թիւրք զօրք իրկելն արգիւտեցաւ, «Զգնէք եւ ուզած կերպովս խաղաղեցնեմ կողմն կ'ըսէք, վերջը ըլլալիքին պատասխանատու չեմ»: Նոյնպէս սեպտեմբեր 3-ին Քարտիֆի (Անգլիա) մէջ հայտնաբերու միթիմի մը պիտի տեղի ունենար. օրեր առաջ սուլթանը Անգլիոյ դեսպանին կ'իմացնէ թէ այդ միթիմի կարող է մահմէդական մոլեռանդութիւնը գրգռել հայերուն դէմ: Կրէտէի մէջ Երջրագի գուշակութիւնը եկաւ ելալ, իսկ Քարտիֆի միթիմիկն արդիւնք դեռ կըսպաննէր: Անա սուլթան չամիդին Երջրագի գուշակին մէջ ցնամ վիճուկ քաղաքակրթութիւնը. ու անոր «էտէպսիզ» թագաւորութեան պատկերը:

Կրէտէի դէպքը Արեւելքի մէջ Անգլիոյ արդէն ինկած պատիւին մահացու հարւած մը կուտայ, եթէ Անգլիա, որուն համբերութիւնը երկայն ու վճիռը կտրուկ է, իր անարգւած պատիւը չբարձրացնէ: Կրէտէն Անգլիոյ ազդու քաղաքակրթութեան հրաւեր մըն էր: Յուսակ է որ նենգ Արիօնը սուլթանին արհամարհանքները կ'ընէ ետքը, անոր գնդակներն ալ չի մարսիր: Բաղձալի է որ անգլիական ուժերը արեւելեան հարցը չբառնէն անցնէին, այլ մէջը խրէին:

Կրէտէի հարցը եղ կը լեցնէ նորէն արեւելեան ինդրին վրայ. այս անգամ տէրութիւնները թատերաբեմին վրայ կ'ընեան աւելի քարկոխուած, սրբազրւած տրամադրութիւններով եւ ուժեղ քայլերով, համոզւած թէ ալ ձգձգումն ատենը չէ. եւ եթէ թող ամա սուլթան չամիդ ամբողջ քրիստոնեաներուն արիւնը հում հում պիտի խմէ: Ուրեմն չորս պետութիւնները վճուր են կամթել չամիդին ականջը, ծվացնել զան, եւ, եթէ շատ յամուի, արիւնը փորը քալեցնել: Եթէ ցարդ չոր ծծի տեղ քիչ մը արիւն հանէն անկէ, այսքան արիւն ծովեր չէր կազմել. թիւրքը ծծես նէ խելքը գրուելու կուտայ. աս էր ամէնէն փորձառու մարդոց կարծիքը: Սուլթանը թող չսգաւորի — թիւրքերը պէտք ունին իրեն պէս երեսը ծերմակ փատիշահի մը — քիչ մը փիլակ, քիչ մըն ալ... լուտաս ուտէ ամէն քան կը մոռնայ: Անցուղ մոռցու:

Թիւրքիան շատ քան մոռցած է, շատ ալ մոռնալու վրայ է ինչալաւ: Չորս պետութիւնները հոկտ. 5-ին սուլթան Գոան իրենց վերջնազիւր որուն մէջ յիշելով քաղաքապետ թուրքի ան ու մարդը

կուրծի ան անունով միջամտութիւնն, եւ հաստատելով թէ թիւրք զինուորներու ներկայութիւնը կզգիին մէջ խոտվութեան եւ անկարգութեան գլխաւոր աղբիւր մըն է, կը շեշտեն հինգ կէտերուն վրայ: 1. Մինչեւ մէկ ամիս թիւրք զինուորները պէտք է հեռանան կղզիէն: 2. Դուռը վերջնապէս հաստատուն պատասխան տարու է մինչեւ ութը օր: 3. Մերժման կամ ձգձգման պահուն տէրութիւնները իրենք պիտի գործադրեն վճիռը: 4. Տէրութիւնները իրենք պիտի ապահովեն միւսիւրմանները: 5. Սուլթանին զերհովանաւորութիւնը պիտի պահուի, եթէ զինուորները յօժար կամքով դուրս ելլեն:

Դուռը առանց լեզուի տարու ընդունելու է կ'ըսեն: Կրէտէի քրիստոնէականներուն ուրախութիւնը սահման չունի: Կղզին տարեկան պատիկ տուրք մը պիտի պայ սուլթանին. ինչպէս շատը քերանը ոսկոր մը կը նետեն որպէս զի չլնկնկայ:

\* \* \*

Թիւրքի ստրուկութեան անյնկի սկզբունքը պարբերական նոր խզտում մըն ալ կը կրէ, հպատակելով տիեզերական կերպարանափոխութեան օրէնքին: Եւ ինչ որ կը խողովացնէ մեր սիրտը՝ միւսիւրմաններու ձեռքէն ելած հող մը ալ եւս ետ չդառնալու սկզբունքն է: Իրան է որ թիւրք զագիները ու թիւրք անուշ քերան թերթերը դեռ կը հիւսնան իրենց փառելահին գերբնական կարողութեան վրայ ու անոր հոտովը կը գինովանան: Իրան է որ չամիտ իր երկիրը անկար պատմութեան մը կը կարծէ որ չի քակիր եւ որուն ամբողջութիւնը ապահոված է միջազգային յաւիտենական անհամաձայնութեան պատճառով: Իրան է որ իրենց գազանութիւնները իրենց անպատում փառքը պիտի ըլլան: Թիւրքերուն մեծ մասը սատկին երթան մէյ մը կեանքով շարդելու հիւանդութիւնէն վազ չպիտի գան, մէյ մըն ալ իրենց կոյր յաւակնոտութենէն:

Տէրութիւնները իրաւ է ցարդ ձեռք չդառնցին Թիւրքի ստրուկութեան, քայց քամ դրած էին զան. ծծեցին ծծեցին չորցուցին. երկրին գանձը դարտակ կը զոյս, իսկ պաշտօնեաները անօթի կը զկրտան: Նոյնիսկ սուլթանին անձնական գանձը կը դարտակի Գերմանիոյ կայսեր ընդունելութեան համար: Ոչ վաճառականութիւն կայ, ոչ շէնքնորճ վարուցան կ'ըլլայ, ոչ ալ վարվաստակ կայ: Երբ երկիր մը այդ օրին կը հասնի, միակ ծարձամբան յեղափոխութիւնն է: Ահմէդ Ռիզաներ շեն իհարկէ որ այդ ծամբան պիտի պատրաստեն. այդ էֆէնտին մինչեւ հիմա այն համագումը ունի թէ Թիւրքերը լըջամիտ մարդիկ են, յեղափոխութիւնը թեթեւօտիկ ազգերուն յատուկ է, չտեսնում ընկրով իրենց պատմութիւնը, արեան ու աւերակներու լայն յարդողի այն ծամբան որ կը ձգի, կ'երկնայ միջոցին ու ծամանակին մէջ...

Ժամանակ մը յոյն-թրքական դաշնակցութեան ծայն մը ելաւ. Ռիզան սուլթանին այդ նախաձեռնութեան ամէնէն մեծ հիացողներէն եւ պաշտպաններէն եղած էր: Յոյն-թրքական միութիւն, ինչ իտէալ... քայց Կրէտէի վերջին դէպքերը հիասթափ կ'ընեն դրական փոխօժան եւ լեռանցով մը կ'ըսէ թէ յոյները իրենց «հին հմաստութեան» ժառանգորդները չեն. ուրկից կարելի է հետեցնել թէ օսմանցիները իրենց պապեանական քարքերուն ու քնազներուն հաւատարիմ մնացած են: Ազնիւ չի գտներ յարձակումը Կրէտէի անպաշտպան միւսիւրմաններուն վրայ, որոնք արդարութեան միայն օգնութիւն կըսպանն. ենթադրելով որ թիւրքերը ներսեւի (ésotérique) արդարութեան ըմբռնումը ունին իրենց համար. այդ արդարութիւնը չէ որ կըսպասէ Ռիզան: Ինչ որ ծիծաղելի է փիլիսոփայի մը քով անոր համամարդկային եւ անաշտ իտէալէ գուրկ ըլլան է: Ահմէդ Ռիզա Կրէտէի վրայ կը նայի, քեր սուլթանի ստորուկ կղզիի մը վրայ ուր մահմէդական պարկեշտ տարբը իրաւունք ունի քրիստոնէայ տարբը ծզմելու, շնչելու, հողերը սեփականելու. եւ թէ քրիստոնէականներուն կողմէ եղած ու եւ է դժգոհութիւն լըբութեան ու աւազակութեան նշան է: Դժարը կուզայ երբ քրիստոնէականները անցած տարւան ապստամբութեան ատեն թիւրքերուն անսպառ հողերէն մէյմէկ պատառ հող կը խլեն: «Թիւրքերը թէ եւ փորքամասնութիւն են կ'ըսէ, քայց քուր հողերուն տէրն էին». եւ աչքապարտիւն կը սեպէ այդ համագրաւումը: Ինչն կը մոռնայ թէ թիւրքերն ալ ատենով նոյն հակընկերային միջոցով խլած են հողերը: Վանի խոտվութեան ատեն, թիւրքերը երբ հայերուն տուները կը թալանէին, զարմանքով կ'ըսէին. «Հայերը ինչ անհատնում կարկարասիք ունին»:

Թիւրքերը իրենց փշթածը կը դռն. քայց Ռիզան կ'ըսէ իմաստասիրորէն ըսել Je pense, donc... comme un turc.

\* \* \*

Գերման կայսեր Պօլիս այցը դարուս անամթծ եղելութիւն-

ներէն մէկը կը սեպի, մանաւանդ այս ճգնաժամին, երբ կրկիրը ելիմուսպէս մանկութեան հասած է. սուլթանը աշխատած էր որ տէրութիւններուն վերջնագիրը, Վիլհէլմի, իր լուսադքօր, Պօլիս գալէն ետքը տրել. որպէս զի ինչպէր անկէ որ այդ «դան բաժակը» հեռացի իրմէ: Վիլհէլմ հիմկուց ձեռքերը լացած է այդ հարցին մէջ. քայց որովհետեւ քարքաւական ու երեսպաշտ քայգէրը աններելի ցուցամու մըն է, զուցէ փորձէ քար մը նետել համաձայնութիւնը լըրծելու համար: Իր սովուկ զինուորական շքեղ հալաւը — կարծ օրը հինգ անգամ՝ հազուստ կը փոխէ — արեւելցիներուն ցցնելու համար Երուսաղէմ՝ պիտի երթայ. Փոյր-Ասիոյ քաղաքներուն մէջ իր ստղաւարտը պիտի փայլեցնէ եւ պիտի ինդրէ սուլթանէն որ... հայերը շարդէ գերմաններուն տեղ ընկնու համար: Գերմանական առասպելին մարդը կը յիշեցնէ քիչ մը, որ ամէն տեղ իր կորսնցուցած շուքը կը փնտռէ: Զրիստոս բացառաբար պիտի ըսէ այդ ուրուր ընտանորին. «Աղբասներէն զողջեր ու ետեւէս եկուր»: Վիլհէլմի անյագ պատրոյգին վրայ վատելով Թիւրքիոյ եղը պիտի հասնի: Իսկ սուլթան չամիդ ապրելու համար առասպելին աստածին պէս իր գաւառները կ'ուռէ:

### Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Թ Ի Ի Ն

#### ՏԱՊԱՐ Կեդր. Կօմիտէն ստացած է՝

Սուլիշ շրջ. 35 դահեկան. Զրվէժ շրջ. 27, Շիոթ շրջ 10, Գեղշուկ շրջ. 10:

#### ՆԱԿԱՅՆՎՍՏԻ Կօմիտէն՝

Ձորափորի Սիկիսա խ. 5 ուրբի, Լիվանա քաղաք խ. 15: Գումար 20 ուրբի:

Գաղթավայրի մանածիւղի մուտքը. — Մօսիկ գիւղի Հաստա խ. 359 ուրբի, Լեռնապատ գիւղի Սէր խ. 70, 70, Բար գիւղի Առիւ խ. 150, 20, Եգիկիս գիւղի Կայծ խ. 26, Խորին գիւղի Հայրենիք խ. 38, Բլուր գիւղի Ազգասէր խ. 25, Կարմիր գիւղի Յոյս խ. 136, նոյն գիւղէն Կարապետ Կարապետեան 100: Գումար 904 ուրբի 90 կօպէկ:

Ապաստանի Ապառաժ գիւղէն. — Արև 6 ուրբի, Լուսին 6, Բօլբօլիկ 5 ու կէս, Ավճի 2, Հայր Աբրահամ 2, Բազէ 2: Գումար 53 ուրբի 50 կօպէկ:

#### ՈՍԿԵՅԱՆՔԻ Կօմիտէն՝

8-էն 67 անգլ. ոսկի 20 շիլլին. Ապսիւ Արսէյ 10 դահեկան, Որոտում խ. 25 (ողջ), Մկրատ 20, Անուշաւան խ. 44, Թովմաս-գալթա 5:

Արշակաւանէն՝ Երկիւղած խ. 20 դահեկան, Անճաղոն խ. 15:

#### ԱԼԷՔՍԱՆԳՐԻՈՅ Կօմիտէն՝

1898 մարտ, ապրիլ եւ մայիս ամիսներուն մէջ. Մեղու 90 դահեկան ողջ, Գօզան պէյ 90, Նրգօ 75, 8. Ագիգ, Պօլսեցի 60-ական, Գ. Լուսանեան, Կիզէ Կիւթիւնը Փրկութիւն է, Մայր Հայաստան, Տիկին Շուշանիկ, Քէշեշեան, Մրտոս, Յոյս 30-ական, Տիրտէոս, 8. Ղազ. 24-ական, Յուսիկ, Եր. Դերօ, Համեստ 20-ական, Իցաիթամս, Բաշ Մ. 15-ական, Կոիւ 10, Ազատ 5, Գանճանակէն հասոյթ 125: Գումար 893 դահեկան ողջ:

#### ԱՍԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կօմիտէն՝

1897 տարեշրջանին մէջ ստացած է 587 դօլլար:

#### ԿԻՊՐՈՍ X. քղ.-ի Կօմիտէն՝

Մինտօր 2 շիլլին, Արա 3 շիլ., Բալիկասօ 1 շիլ., Պիս 1 շիլ. Հայկ 1 շիլ., Քէհիս 2 շիլ. Լ. 5 շիլ.: — Գումար 15 շիլլին:

Խմբագրութեան գիմէլ Հետեւեալ Հասցէով՝  
Rédaction du Droschak, Genève (Suisse)